

ԳԻՒՂԱԿԱՆ ՔԱՀԱՆԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ինչպէս են հասկացում եկեղեցական խորհուրդներ
գիւղում:

Ինչ որ մասնաւորապէս ասել էինք ժամասացութեան մասին, նոյնը ընդհանրապէս նկատուած է եկեղեցական խորհուրդների վերաբերմամբ: Գիւղացու համար եկեղեցական խորհուրդների մէջ էական է ձեւը, արտաքին շարժումները, քահանայի ղեկստաւորութիւնը, մի խօսքով խորհրդի արտաքինը — ծիսակատարութիւնը, որ դարերի ընթացքում զանազան ազդեցութիւնների տակ մշակուել է և ընդունել իր ներկայ կերպարանքը: Հոգեւորականութեան արտաքին ձև ող պայմանների ազդեցութեամբ իր համար էական դործունէութեան մէջ թուլանալը և ուրիշ կողմնակի հանգամանքներ այն հետեանքին են հասցրել, որ եկ. խորհուրդները իրենց ներքին խմաստը կորցրել են և նրա տեղը բռնել է խօսքերի շարադասութիւնը և համապատասխան արարողութիւնները:

Իւրաքանչիւրը եկ. խորհուրդներից հետեւեալ միմեանց հետ լծորդուած մասերն ունի. նախ բուն աւետարանական մասը, որ խորհուրդի ներքին էական մասը — կորիզն է կազմում և վերցրած է Քրիստոսի խորհրդին համապատասխանող խօսքերից, երկրորդ՝ ազգային — եկեղեցական մասը, որ բաղկացած է համապատասխան զրքերի, ազօթքների, քարոզների հիւսուածքից և ամփոփուած է Մաշտոցի մէջ և երրորդ՝ զուտ ազգայինը — զանազան սովորութիւնների, որ կապուելով այս կամ այն խորհրդի հետ կրօնական գոյն և նշանակութիւն են ստացել:

Գիւղացու վերաբերմունքը ցոյց է տալիս, որ նրա համար առաջնակարգ անհրաժեշտութիւն են զուտ ազգային սովորութիւնները, երկրորդական նշանակութիւն ունի եկեղեցական ծիսակատարութիւնը, իսկ այդ ծիսակատարութեան մէջ թաղնւած բուն աւետարանական մա-

ալ ամենեւին չէ նկատում գիւղացին, նոյն իսկ չգիտէ նրա մասին: Եթէ խորհրդի մէջ եղած զուտ աւետարանական էական մասը նա չէ նկատում, էլ ի՞նչ խօսք կարող է լինել եկ. խորհրդի ներքին պահանջի համեմատ կերպարանափոխելու, վերածնունդի մասին: Ինչպէս ժամասացութեան, այ պէս էլ եկ. խորհուրդների ժամանակ որոշ ծէս կատարուեց: Հէնց դրանով էլ սրբազործուեց ինչ որ սրբազործուելու էր. այսպէս մկրտութեան կարգը կատարեցին— երեխան դարձաւ քրիստոնեայ. խոստովանութեան կարգը կատարեցին— մեղքերին թողութիւն եղաւ, հաղորդուեց— քրիստոնէական ամենածանր պարտականութիւնը կատարեց, թաղման կարգը կատարուեց— հէնց դրանով ննջեցեալը ջոկնուեց միւս հասարակ մահկանացուներից և մտաւ քրիստոնեայ ննջեցեալների շարքը. ձեռնադրուեց— հէնց դրանով երկուայ սովորական ամբոխից ոչնչով չզանազանուող անձը դարձաւ քահանայ, քրիստոնէութեան ուսուցիչ, Աւետարանի մեկնող. պսակի խորհուրդ կատարուեց— երկու իրարու համար խորթ, ոչնչով միմեանց չհամապատասխանող անձինք անքակտելի կապով կապուեցին: Համապատասխան վերածնութեան, համապատասխան տրամադրութեան, եկ. խորհրդի ներքին էութեան համաձայն հոգեկան, մտաւոր կամ բարոյական պատրաստութեան մտոյն ի՞նչ խօսք կարող է լինել:

Մկրտութեան ժամանակ, օրինակ, առաջնակարգ նշանակութիւն ունին ընդհանուր ազգային և մասնաւոր տեղական սովորութիւնները. այսպէս կնքահօր— քաւորի հրաւիրելը, «քառասունօրեայ» լինելուց նորածին երեխային ազատելու զանազան միջոցները, այն հաւատալիքը, որ պատի ընթացքում ծնուած երեխային չի կարելի թողնել մինչև ուտիսի գալը կամ ընդհակառակն, քաւորի փոխելը մեղք է, երբ երեխաները չեն ապրում, պէտք է փողոց դուրս գալ և առաջին պատահողին հրաւիրել քաւորութեան, երեխայի բերանից ջուր է դնում— քաւորի ճկոյթը պէտք է դնել նրա բերանը, որպէս զի երեխան գիշերները հանգիստ քնի, քաւորի կոշիկի մի հատը գողա-

նալ և զնեւ երեխայի բարձի տակ, երեխային տուն տա-
րան անպատճառ հացի և մաղի վերայ պէտք է գնել, ե-
րեխան շորերը պատռոտում է շուտ շուտ, անպատճառ
շուն է եկել առաջը մկրտութեան ժամանակ տուն տա-
նելիս, ծննդկանին այցելութիւն գնալիս տարած աման-
ները անպատճառ պէտք է զոյգ լինեն, «քառասունքակոխ»
եղած ժամանակ աթարի հետ պէտք է կշռել, կամ գե-
րեզմանները տանելով մի գերեզմանաքարի վերայ գնել ու
հեռանալով նկատել երեխան լռում է թէ լաց է լինում
..., մի խօսքով տասնեակ այսպիսի խորհրդաւոր սնտրիա-
պաշտութիւններ չնայելով իրենց պատճառած յայտնի
վնասներին, առաջնակարգ նշանակութիւն ունին: Այս
ամենից յետոյ երկրորդական նշանակութիւն ունին և
մասնաւոր ուշադրութեան են արժանանում թէ ինչպէս
քահանան մկրտութեան խորհուրդը կատարելիս «հրաժա-
րեմք տուեց», «հաւատամք բռնեց» կամ տղային հաղոր-
դելուց առաջ բարձրացրեց սեղան, իսկ աղջկան ոչ: Իսկ
մկրտութեան էական մասը մաքրելը Հօր, Որդու և ս. Հո-
գու անունով, այն պատասխանատուութիւնը, որին են-
թարկում են ծնողները մանուկի մկրտութեան պատճա-
ռով, այդ մաքրութեան համապատասխան մի բան կեանքի
մէջ, այդ ամենէին ուշադրութեան չէ արժանանում:

«խոստովանուել» գիւղացիների լեզուով նշանակում
է տարուայ մէջ որոշ օրերում (նաւակատեաց պատա-
րագներին) չողել քահանայի առաջ և ենթարկուել մի
խորհրդաւոր դործողութեան, որի ընթացքում պէտք է
քահանայի հետ որոշ միջոցներում արտասանել «մեղայ
Աստուծոյ» և «ողորմեսցին» լսելուց յետոյ մի քանի կո-
պէկ գնելով քահանայի բուռը (? խմբ.) և նրա ձեռքը
համբուրելով վեր կենալ ու հեռանալ: Այս խորհրդաւոր
դործողութեան ենթարկուելով քաւում է գիւղացու մինչև
նոյն օրը դործած մեղքերը և գիւղացին հին բեռից թե-
թեացած գիտակցութեամբ զիմում է կեանքի հոսանքով
նոր բեռ կազմելու: Փորձեցէք նրան հասկացնել, որ այդ-
պէս չէ խոստովանութիւնը, որ նա, եթէ քաւել է ուզում,

այն ամենը, ինչ որ ծանրացած է նրա հոգու վրայ, ինչ բանի համար որ զգում է թէ Աստուած իր հետ հաշտ լինել չէ կարող, պարտական է այն ամենն ամենայն մանրամասնութեամբ պատմել քահանային, նրանից օգտակար խորհուրդ և եղբայրական աջակցութիւն ստանալ ապագայ գայթակղութեան դէմ կռուելու համար: Այդ կլինի զիւղացու համար մի նորութիւն, նա կասի, որ ձեր տաճը հասկանալի է և օգտակար, բայց ձեզանից խուսափելով կը գնայ միւս քահանայի մօտ և իւր ձեռով խոստովանուելով կը համարի իրեն խոստովանած: Պարզ է. դարձիւրի սովորութիւնը նրա մտքին այն ուղղութիւնն է տուել, որ փրկարար ուժը արտաքին ձեականութեան և գրաբար աղօթքների ընթերցանութեան մէջն է: Այսպէս կատարելութեան սանդուխտի երկու տարբեր աստիճանների (բարձր և ստորին) վերայ կանգնած երկու հոգիների ազատ հաղորդակցութեան ամենավսեմ խորհուրդը այսպիսի զուտ ձեական արարողական կերպարանք է ընդունել և զիւղացին ամենեւին չխոստովանուելով իրեն համարում է խոստովանած: Խոստովանութեան խորհուրդը, որ նպատակ ունի դէպի բարձրը թեւակոխելու տրամադրութիւն առաջացնել, դէպի աստուածայինը ձգտելու ծարաւ ստեղծել, որ կոչումն ունի վերածնուելու ձգտումն ունեցող հոգուները բարոյական ճիգերը թեթեւացնել, այժմ, դրա հակառակ, դնում է խոստովանողի մէջ մի հպարտ բնքնաբաւական, պարտքը լիովին կատարած լինելու զիտակցութիւն: Ո՛րպիսի մոլորութիւն: Իսկ կեանքը զլորում է դէպի կորուստ տանող հոսանքով և խոստովանող անհատը մի բռպէ անգամ չէ խուսափում այդ հոսանքից: Չէ՞ որ քրիստոնէական պարտականութիւնը կատարուած է, չէ՞ որ խոստովանուել է արդէն:

Խոստովանութեանը հետեւում է հաղորդութիւնը: Այս տեղ ևս ոչ մի միջնորդարական զիտակցութիւն չէ երևում զիւղացիների մէջ: Սովորաբար զիւղերում հաղորդում են, որովհետեւ այնպէս են համոզուած, որ քրիստոնէութեան էական նշանը հաղորդութիւնն է. բայց նրանց հաս-

կացողութիւնը այս խորհրդի վերաբերմամբ արդարորդունա՞ծ հացը և զինին ընդունելուց այն կողմը չէ անցնում: Գի-
ղացին համոզուած է, որ պատարադի միջոցով նուիրադործ-
ուած հացը և զինին ինքն ըստ ինքեան փրկարար են: Հա-
ղորդութիւնից յետոյ քրիստոնէական պարտաւորութիւն-
ները լիովին կատարած լինելու ինքնաբաւական զիտակցու-
թիւնն է տիրում նրա հոգու մէջ: Հաղորդուելով՝ Քրիս-
տոսի հետ միաւորուելու, նոյնանալու, հոգեպէս նրա մար-
մինը զգենալու տրամադրութիւն չէ ստեղծուում նրա
մէջ, ճշմարտութեան համար զոհաբերելու, գործով հա-
կացողութեամբ նրան նմանուելու պատրաստութիւն նա իր
համար պարտաւորական չէ համարում: Նու դրա մասին
չէ էլ մտածում: Խոստովանութեան խորհրդին հետեւց
հաղորդութիւնը—բաւական է: Այնուհետեւ ինչ որ լինե-
լու է կը լինի հէնց էնպէս, զօրութիւնը հէնց հաղորդու-
թիւնը ընդունելու մէջն է ...: Իսկ կեանքը իր մանրամաս-
նութիւններով նոյնն է և նոյնը պիտի մնայ տանելով
քրիստոնէայ անհատին զէպի անկումն, զէպի բարոյական
կորուստ: Իեանքը ի՞նչ կապ ունի կրօնի հետ: Քրիստոնէա-
կան պարտաւորութիւնները իրենց կարգով, կեանքը իր
կարգով, նրանց մէջ ոչ մի առնչութիւն չկայ և չպէտք է
լինի: Ապացոյց թէ հաղորդութիւնը ինքն ըստ ինքեան է
փրկարար համարուում. յանկարծամահ է եղել մէկը, վեր-
ջին շնչում քահանան պէտք է հաղորդ հասցնի նրան:
Խեղճ զիւղական քահանան իր համոզմունքի հակառակ
պէտք է լուծի ջրի մէջ մի մաս հաղորդութիւն և լցնի
անշնչացող զիակի բերանը. ի՞նչու, որովհետեւ հէնց նրա-
նումն է փրկութիւնը: Հաղորդութիւնը զիւղացիք ընդունում
են նաև իբրև բժշկական միջոց, երեքշաբթի և հինգշաբթի
օրերը տեսնէք թէ ի՞նչպէս ջերմեռանդ մայրերը հիւանդ
երեխաներին բերում են եկեղեցի և խնդրում քահանային,
որ հաղորդի նրանց: «Նորից է առել», «չորեքշաբթամուտ»
է այսօր, որ հաղորդես լաւ կը լինի. համոզում են նրանք
քահանային: Քահանան հաղորդութիւնից խուսափող երե-
խաներին զանազան զրաւիչ խօսքերով խաբում է, որ ըն-

զունեն հաղորդութիւնը: Երբ Քրիստոս իր արիւնը և մարմինը առաջարկում էր իր աշակերտներին իրրե յաւիտենական կեանքի համար մեր մարդկային թուլութիւնը կազդուրող ըմպելի և կերակուր և աշակերտները զայթակղւում էին, նրանց զայթակղութիւնը փարատելու համար այսպէս ասաց. «Հոգին է կենդանացնողը, մարմինը չէ որ օգնում է. ինչ որ ես խօսեցի ձեզ հետ, այն հոգի ու կեանք է: Իսկ այժմ քահանան երեխաներին հաղորդելիս խաղաղացնելու համար «չամիչ է, չամիչ» ասում է նրանց: Ո՛րպիսի դառը հեզնութիւն, զաղափարների ո՛րպիսի աններելի շփոթութիւն, վեհութեան ո՛րպիսի այլանդակ մանրացումն ... և այդ թոյլ է տրւում մեր եկեղեցում ...: Ե՛ւ քահանան, և՛ ծնողները գոհ են, սովորութիւնը կասարթուեց:

Պատկի խորհուրդը նոյն անմխիթար երեւոյթն է ներկայացնում: Գիւղացու համար այստեղ ևս էական է զուտ ազգային սովորութիւնը. իսկ եկեղեցական ծիսակատարութիւնը երկրորդական նշանակութիւն ունի: Այս բանի մէջ առաւել ազդող հանգամանքը, որ եկեղեցական պատկի արարողութիւնը հեշտութեամբ են զանցառութեան տալիս, դրամական ծախսերն են, որ կապուած են պատկի հետ: Պէտք է աթոռահարկ վճարել, պատկադրամ, հալաւ օրհնէք, նշան օրհնէք տալ քահանային. մօտաւորապէս 15—20 բուրլի ծախս անել: Երբեմն դիւղացիք աղքատութեան պատճառով կամ «հէնց էնպէս» չկամենալով քահանայի պահանջները բաւարարել՝ խոյս են տալիս եկ. պոսկից և ապօրինի կենակցում միմեանց հետ: «Որ աէրտէբը մի քանի խօսք չլիքլիքայ մեր գլխին չենք կարող միտին ապրել», դատում են նրանք: Ողևորութեան բոպէին մօռանում են և այն զուտ իրաւաբանական անյարմար դրութիւնը, որի մէջ ընկնում են ապօրինի կենակցութեան պատճառով իրենք և իրենց ժառանգները: Գիւղացին մտածում է իր դրութեան մասին երբ այն կրիտիքական է: Քիչ չէ պատահել, որ կնոջ կենդանութեան ժամանակ, առանց նրանից օրինական կարգով բաժանուե-

լու: զիւղացին ապօրինի կենակցում է ուրիշի հետ և ամենեւին իրեն անյարմար չէ զգում: որովհետև միջավայրը, որ նրանց շրջապատում է, ոչնչով չէ զանազանեում նրանց կեանքից և դրանից նրանց հասարակական յարաբերութիւնները ամենեւին չեն փոխւում: Պատահում են դէպքեր, որ առաջին ամուսնութիւնից մնացած զաւակների համար խուսափում են եկ. պսակից: Կամ առաջին ամուսնու կայքերին տիրելու համար, թէև կենակցում են ուրիշի հետ, բայց եկ. պսակից հրաժարւում են: Մի խօսքով արտաքին, քրիստոնէական կրօնի հետ ամենեւին կապ չունեցող հանգամանքներին յարմարուելու ցանկութիւնը աւելի զօրեղ է լինում քան կրօնական գիտակցութիւնը, որ պիտի ստիպէր նրանց չփնտրել եկ. պսակից դուրս կենակցութիւն:

Ձեռնադրութեան մասին, տարաբաղդարար, նոյն հասկացողութիւն է նկատւում, ինչ որ ընդհանրապէս միւս եկ. խորհուրդների մասին: Ձեռնադրուող անձնաւորութեան ներքին մտաւոր և բարոյական պատրաստականութեան մասին ոչ մի պահանջ չկայ: Ընդհակառակն, դէպքեր են եղել, որ հասարակաց հանգստութիւնը վրդովող յայտնի դողին—իր անկարգութիւնները շարունակելու մի որոշ չափով արգելք լինելու համար քահանայացրել են նրան: Մէկը կարդալ գիտէ, աշակերտել է ժամադրքին և Մաշտոցին—նա պատրաստ քահանայացու է զիւղացիների համար: Եւ իրօք, այն հայեացքը, որ ունի զիւղացին քահանայի կատարած ծառայութեան մասին, ուրիշ պատրաստութեան տեղիք չէ տալիս:

Մոռացայ յիշել թաղման կարգի մասին: Գիւղացիների կարծիքով թաղման ժամանակ անհրաժեշտ է «Փառք ի բարձունս», որովհետև մինչև այն չասուի, հողին գերեզմանից չի հեռանալ: Մինչև անգամ այսպիսի հաւատալիք կայ, որ մահմետական կրօնական պաշտօնեաները ծածուկ անդիր են անում «Փառք ի բարձունս» երգը և ծածկաբար իրենց ննջեցեալների վերայ անում են, ապա թէ ոչ նրանք—ննջեցեալները կարող են նորից կենդանանալ

զանազան կենդանիների կերպարանքով: Մեծ ուշադրութեամբ հետևում են նաև հողի օրհնելուն և գերեզմանի կնքելուն և նրանց մէջ բաւական անկեղծ երջումն է. «օրհնած հողի, խաչած գերեզմանի չարժանանամ» եթէ ... ևլն:

Եւ այսպէս զիւղերում քահանայի արած ծառայութիւնը պատահական է, շատ անգամ ոչ անհրաժեշտ և զուտ ծիսական լինելով երբեմն կամայական: Գորա համայնութիւն էլ եկեղեցական պաշտօնեաների վարձատրութիւնը լիովին համապատասխան է զիւղացիների եկ. պաշտօնեաներից սպասելիքին: Հատ հատ է քահանայի կատարած խորհուրդը, այդպէս է և նրա ստացած վարձատրութիւնը: Ինչ ջանքով անհրաժեշտութիւն է գտնում զիւղացին քահանայի արած ծառայութեան մէջ, նոյն չափով և անհրաժեշտ է համարում վարձատրել նրան: Անընդհատ և մշտական չէ ճանաչում քահանայի ծառայութիւնը դրա համար էլ մինչև օրս զիւղացու մէջ միտք չէ ծագել ընդ միշտ և անընդհատ կերպով ապահովել քահանայի կեանքը: Գիւղացիների հասկացողութեամբ որքան շատ լինի քահանաների թիւը, այնքան ձեռնտու է իրանց-գիւղացիների համար, ով արժան գնով խորհուրդ կը կատարի, նրան կը զիմեն: Որքան տղէա և խեղճ լինի, այնքան ձեռնտու է իրենց—գիւղացիների ներքին յարաբերութիւնների մէջ չի խառնուի և նրանց հոգու անդորրութիւնը չի վրդովի: Կապրին ինչպէս կը կամենան իրենց սովորական կեանքով: Քրիստոնէութեան գործն էլ իր կարգով առաջ կը գնայ: Գիւղացիների համար ամենալաւ քահանան նա կը լինի, ով իր ժամից յետ չի ընկնի, եկ. խորհուրդները սուս ու փուս կը կատարի և մնացած ժամանակ ամենեւին չի երևայ:

Գալով ժամասացութեան և եկ. խորհուրդների բարոյական արժէքին, փաստ է, որ նրանք կատարուել են և կատարւում են, բայց քրիստոնեայ զիւղերի փողոցները, քրիստոնեայ զիւղացիների լեզուն, նրանց սիրտը, միտքը, զգացումները, համակրութիւնը և հակակրութիւնը, գործողութիւնների շարժառիթները, ներքին ընտանե-

կան և արտաքին հասարակական յարաբերութիւններն նեն ոչ քրիստոնէական: Վերջրէք երկու հարեան գիւղեր մէկը քրիստոնէայ ազգաբնակութեամբ միւսը դիցուք մահճ մետական, եթէ վերացն նք զգետտի, լեզւի և արտաքին կրօնական ծիսական տարբերութիւնները. նրանց մէջ դժուար կը լինի ուրիշ տարբերութիւններ գտն լ:

Թէ ի՞նչ է արել մեր ազգային եկեղեցին անցեալում, այդ արդէն պատմութիւնը գնահատ' լ է: Ի՞նչ է անում այժմ նոյն եկեղեցին, իրական կեանքի պատկերը այդ գործունէութ'ան կենդանի վիան է: Ի՞նչ պէտք է անի եկեղ'ցին սուրանից յետոյ, այդ եկեղ'ցու իսկական սրտացաւ անդամների ամենաէական հոգացողութ'ան առարկան պէտք է լինի: Այն, ինչ որ անգոր է անելու ծիսականութիւնը, զօրաւոր կը լինի կատարելու կենդանի բովանդակութիւնը— կենդանարար հոգին, որի անսպասելի շտեմարանը Աւետարանն է: Միայն օգտուել է հարկաւոր ոչ անհասկանալի ալ միաբանութեամբ, եկեղ'ցական ամբողջ կազմով:

Սմբատ Բ. Սարգսեանց.

Մեծ Շահրիար 1908 թ. 5 հոկտ.

ՈՒՐՈՒԱԳԾԵՐ

19-ՐԴ ԴԱՐՈՒ ՀԱՅՈՅ ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԻՅ:

Այս շրջանում անարժէք ստանաւորներ են շինում և միւս Մխիթարեան քերթողները՝ Աւետիքեան, Զաւիշախեան, Թոմաճեան և նոյն իսկ Բագրատունի, որոնց բանաստեղծութիւնները բաւական ուշ, 1852 և 1853 թուականներին ամփոփուած են երկու հատորի մէջ՝ «Տաղք Մխիթարեան վարդապետաց»: Երրորդ հատորը, հրատար. 1854 թ., իւր մէջ ունի եզուարդ Հիւրմիւզի (1799—1876) տաղերը, որ սակայն ես նկատի չունիմ՝ ձեռի տակ չունենալով:

ԳԱՔՐԻԷԼ ԱԻՅՏԻՔԵԱՆԻ (1751—1827) վեց երգերից իսկական բանաստեղծութեան հոտ բուրում է միայն «Մօրն Սրբոյն